

աւաւորները, վասն զի Մար-Սարայի վանքը հինէն ի վեր արգիլուած է ընդունիլ կրն ուխտաւորները: Երկաթեայ զրան քովն ի վեր շինուած է Եւոյոխիայ Աշարակը, ի յիշատակ Եւոյոխիա թագուհիին՝ Եւթիմիոսի տուած այցելութեան. ունի եկեղեցի մը յանուն Ս. Սիմէոն Սիւնակեացին և կը ծառայէ իբր զիտանոց մը վանքի դռնապանին համար: Երկաթեայ դռնէն՝ կրկնակի աստիճաններով կը հասնին գաւիթ մը, ուր կայ ութանկիւնի գմբէթաւոր փոքրիկ շէնք մը: Այս շէնքին ներքին մասը գեղեցիկ զարդարանքներ ունի եւ նորակերտ պատկերներ. հո՛ս է Մար-Սարայի զերեզմանը եւ ճապանը, որուն վրայ քանդակուած է յիշատակարան մը. այժմ սրբոյն մարմինը հոն չի գտնուիր, վասն զի փոխադրուած է Վենետիկ, ինչպէս կը վկայէ Պարոնիոս իր Յայսմաուուրքին մէջ: Մար-Սարայի գերեզմանին հիւսիսային արեւելեան կողմն է Ս. Նիկողայոսի մատուռը, ժայռի մը մէջ փորուած և յատակը մոզայիք. երկաթաթել վանդակի մը ետեւը, ինչպէս նաեւ մասնաւոր երկու փայտէ մտուկներու մէջ, հոս ցուցադրուած էին կուտակուած գանկերն ա՛յն վանական քառասուն վկաներուն, որ նահատակուած են է. դարուն, Պարսից արշաւանքին ժամանակ: Նոյն մատրան աջ կողմը կայ չափահասներու յատուկ մարմարեայ մեծ տաղան մը: Մեզ առաջնորդող փոխ տեսչին բացատրութեան համաձայն, Մար-Սարան այս մատուռը յատկացուցած էր Հայ մխարսևներուն՝ ժամերգութեան և պատարագի համար: Գաւիթին արեւելեան կողմը կը բարձրանայ վանքին խաչաձև եկեղեցի, որուն գմբէթը հաստատուած է մեծազանգուած կամարներու վրայ. գմբէթը սիւններ չունի. միայն հարաւային և հիւսիսային պատերուն մէջ շինուած են կամարներուն իբր յնարան՝ հնգական սիւններ, որ եկեղեցւոյ արտաքին կողմէն ալ կ'երևան լայնանիստ շինուածքներով: Այս գեղատեսիլ եկեղեցին, որուն երկարութիւնն է 24 մէթր և լայնութիւնը 9 մէթր, ծածկուած է որմանկարներով, որոնցմէ ոմանք շատ հին, ոմանք ալ շինուած 1865ին: Գոտը կոնքէն (nef) բաժնող մասը ունի ոսկեզօծ փայտէ ճարտար քանդակագործութիւններ. եկեղեցւոյն ճարտարապետական կառուցուածքը արժանի է գնահատութեան: Այս եկեղեցիին հիւսիսային դռնէն դուրս ելնելով աստիճանէ մը վեր ելանք դէպ ի տանիք, որ 150 մէթրէ աւելի բարձրութիւն ունեցող կիրճի մը չորցած հեղեղատին վրայ